

*I. BASILIO DI CESAREA. Il Libro delle Domande (Le Regole). Edito da Gabriella Uluhogian, Lovanii, 1993; Basilio Di Cesarea. Il Libro delle Domande (Le Regole), Tradotto da Gabriella Uluhogian, Lovanii, 1993 (Corpus Scriptorum Christianorum. Orientalium editum consilio Universitatis Catholicae Americae et Universitatis Catholicae Loveniensis, Vol. 536, 537. Scriptores Armeniaci tomus 19, 20).*

ՔԱՐՄԵՆԻ ԿԵՍԱՐԱՑԻ. Գիրք հարցողաց, աշխատասիրության Գաբրիելյա Ուլուհոջյանի. հ. 1 և 2-րդ, Կուվեյն, 1993:

Վերջերս հայագիտության, բյուզանդագիտության և ընդհանուր բանասիրության գրադարանը հարստացավ կրկու մեծագիր հատորներով, որոնց ներկայացրած նյութը իր նշանակությունը դուրս է գալիս ազգային շրջանակներից, քանի որ այն ներկայացնում է մարդկային քաղաքակրթության կերտած դասական արժեքներից մեկի՝ IV դարի նշանավոր բյուզանդական մատենագիր, աստվածաբան, գործիչ Բարսեղ Կեսարացու «Գիրք հարցողաց» (Ἄσχετικόν) երկի հին հայերեն թարգմանության գիտաքննական բնագիրը՝ իտալերեն թարգմանությամբ: Երկու սովոր հատորների պատրաստողն է Բուլոնիայի համալսարանի պրոֆեսոր Գաբրիելյա Ուլուհոջյանը, որն իր հայագիտական, բյուզանդագիտական հետազոտություններով ու գիտակրթական եռանդուն գործունեությամբ շուրջ քառորդ դար ծանոթ անուն է իտալիայի և մայր հայրենիքի գիտական շրջաններում:

Իրագործելով «Գիրք հարցողացի» գիտական կրկնակի հրատարակությունը՝ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով, նա սովյալ դեպքում կատարել է մի աշխատանք, որի համար այլ դեպքերում կպահանջվեին գիտական կոլեկտիվներ: Գիտնականն այս արդյունքին հասել է քայլ առ քայլ, անմնացորդ նվիրումով՝ գիտնականի և հայրենասերի նվիրվածությամբ: Իր աշխատանքի արդյունքները տարիների ընթացքում նա քանիցս մաս-մաս ներկայացրել է Միլանի, Վենետիկի, Տորոնտոյի, Վիեննայի, Բուլոնիայի, Երևանի գիտական հանդեսներում տպագրված ու միջազգային դիտաժողովներում կարդացած զեկուցումների ու հաղորդումների ձևով, այնպես որ մենք կարող էինք հետևել իր նախընտրած թեմայի խորխոր շերտերի մեջ գիտնականի ներթափանցմանը, նորանոր փաստերի հայտնաբերման, պրոբլեմների աստիճանական լուծման ընթացքին:

Գ. Ուլուհոջյանը խոպան տեղում չի սկսել իր գործը: Երևք կապաղովկացիների, հատկապես Բարսեղ Կեսարացու կյանքն ու քարոզչությունը, աստվածաբանական-հանրադատարանային բնույթի երկերը, առնչությունները հայոց հետ հայագիտության ուշագրության ուղբերում են արդեն շուրջ 170 տարի: Մեր օրերում այդ հետաքրքրությունը նորովի դրսևորվեց մասնավորապես Կեսարացու կանոնների հայերեն բնագրի՝ Վազդեն Ղազարյանի և «Վեցօրեայի»՝ Կիմ Մուրադյանի իրականացրած գիտական հրատարակություններով և ուսումնասիրությամբ: Հիշենք նաև, որ գրեթե հարյուր տարի առաջ Վիեննայում տպագրվել էր և Պատարագամատուցը, սակայն՝ Ἄσχετικόν-ի՝ «Գիրք հարցողացի» հրատարակության և հայկական հողում նրա շուրջ 1500-ամյա պատմական ընթացքը համակարգված ներկայացնելու խնդիրը մինչև այժմ առանձին հետազոտության առարկա չէր դարձել: Այդ ուղղությամբ կատարված առաջին լուրջ քայլը գրախոսվող հրատարակությունն է:

Մեր խորին համոզմամբ, Ուլուհոջյանի ուսումնասիրության առաջին կարևոր արժանիքը, որը և կանխորոշել է նրա ընդգրկումները, ինքնատիպությունն ու նորությունը՝ նրա միասնական մտահղացման մեջ է, որ ենթադրում է.

1. «Գիրք հարցողացի» հայերեն թարգմանության գիտաքննական բնագրի պատրաստում աշխարհի տարբեր գրապահոցներում պահվող նրա բոլոր ձեռագրերի հայտնաբերման, դասակարգման, գիտական նկարագրության ուղիով, գրագրերի ծագումնաբանական առնչությունների

ճշտմամբ և այդ հիմքի վրա նախադադար հնազույն և եղակի դրժօրինակների հայտնագործմամբ, ընդարդդիական խնդիրների և, մասնավորապես, հրատարակության նպատակների, բնույթի և սկզբունքների, բնագրերի ընտրության, տարբերակների, դիտական ապարատի և հարակից խնդիրների պարզաբանումով:

2. Հալ միջնադարյան մատենագրության ընդհանուր կոնտեքստում ներկայացնել «Գիրք հարցողացի» սղորդարդիական, բանասիրական և պատմական թնությունը՝ հետամուտ լինելով հայկական հողում նրա 1500-ամյա կյանքի ինքնատուղ ղծերին, յուսարանել թարգմանության հանդամանքները (թարգմանիչ, թարգմանության ժամանակ և այլն), սկզբունքները, հունա-լատինական նախաբնագրերի հետ նրա մերձավորության աստիճանը, տարբերակել բնագրի հայկական շերտերը, հայկական խմբագրության ներքին խմբավորումները և այլն:

Ոչ պակաս նշանակալից է և ուսումնասիրողի նպատակը՝ պայմանավորված վերոնշյալ միասնական մտահղացմամբ՝ սեփական դուրահետ թարգմանությամբ տայ և հայկական տարբերակի իտալերեն թարգմանությունը, որն անշուշտ կրկնակի մեծացրել է հետադուտողի աշխատանքի ծավալները, և՛ դիտական խնդիրների շրջանակը, և՛ աշխատանքի համար պահանջվող ժամանակը, սակայն արգյունքում շահել է գիտությունը, քանի որ միջնադարյան մի խրթնագույն ու բարդագույն տեքստի ավելի լավ թարգմանիչ, քան նրա ներկարմյա հետազոտող, մասնագետ-բնագրագետ հրատարակիչն է: շէր կարելի պատկերացնել:

Այժմ բուն հրատարակության մասին:

Առաջին հատորը հուշարձանի հայերեն թարգմանության առաջին լիակատար հրատարակությունն է, ուր առաջին անգամ տրված է հուշարձանի հայկականացման պատմական ընթացքը իր կոնկրետ դրսևորումներով: Հրատարակությունն աղյուրարդիական առումով լիակատար է և ընդգրկած նյութի տեսակետից՝ աննախադեպ: Սկզբաղյուրների հիմնական մասի թնությունը կատարված է տեղում՝ Սրենսի Մատենադարան, նոր Ձուղայի Ամենափրկիչ վանք, Հռոմի Կաղանաթենսես գրադարան, Վենետիկի Մխիթարյան մատենադարան և այլն: Առաջին անգամ կազմված և հրատարակված է «Գիրք հարցողացի» հայերեն գրչագրերի լիակատար ձեռագրացուցակը՝ 20 ձեռագրերի դիտական նկարագրություն: Մասնավորապես պարզված է, որ հուշարձանը մեղ է հասել մեկ՝ նղակի, իր ներսում ենթախմբերի բաժանվող խմբագրությամբ, որի հանգամանալից թնությունը տրված է առաջին հատորում: Ուլուհոյանը հուշարձանի մատենագրական կյանքի պատմության բաց մնացած օղակները, մասնավորապես նրա X—XI դդ. կենսագրությունը լրացնում է իր իսկ հայտնաբերած մի շարք մագղաթյա և թղթե պատահկների համապատասխան վկայություններով, որոնք անգնահատելի արժեք ունեն ևրկի բնագրի, մասնավորապես նրա բուն մասի՝ այսպես կոչված «հարցմունքներ» ուսումնասիրումն համար և հավաստում են «Գիրք հարցողացի» ևս մեկ տասնյակ հայերեն դրժօրինակների երբեմնի գոյությունը, և դրանով իսկ պարզաբանում համաշխարհային հայրաբանական դրականության դասական նմուշներից մեկի կյանքը հայկական ձեռագրական աշխարհում՝ ժամանակագրական և աշխարհագրական լայն կտրվածքով:

Հրատարակության երկրորդ հատորում նա տալիս է «Գիրք հարցողացի» բուն մասի՝ «հարցմունքներ» հունարեն և հայերեն տարբերակների համեմատական աղյուսակը, ցույց տալիս պատուհասա կոչվող կանոնների թվական տարբերությունը հայերենում, մատնանշում տպագրված նախաբնագրի նկատմամբ հայերենի լեզվական շղղումները, նաև նրանք, որ կարող են ենթադրել հունարեն այնպիսի բնագրեր, որը մեղ չի հասել, սակայն վկայում է հայերեն թարգմանության շրջանի հունարեն այդ բնագրի վիճակը:

Ի դեպ, տողատակային ծանոթագրությունների մասին, որ, մեր կարծիքով, կազմված են պատշաճ բժախնդրությամբ և խստապահանջ ընտրողությամբ, բեռնաթափված երկրորդական կարգի իրողություններից: Սրանք կարող են ուրախացնել և բյուզանդագետներին՝ հնագույն վկայություններով ապագայում սրբագրելու հենց նախաբնագրերը, քանի որ սույն հրատարակությունը նախորդում է թե՛ հունարեն բնագրի, թե՛ արևելյան ալլալեզու միջնադարյան թարգմանությունների հրատարակություններին, մեծապես նպաստելով դրանց երևան գալուն: Այս իսկ առումով ունենք մի դիտողություն: Գտնում ենք, որ նման ծանրակշիռ, երկհատոր, երկլեզվյա հրատարակության մեղ շատ ավելի հանգամանալից, թերևս բնագրին հաջորդող կոմենտարների առանձին բաժնով պետք է ներկայացվին հունա-հայկական ձեռագրերի համեմատական թնության արդյունքները, ամեն կարգի՝ թարգմանական, խմբագրական, լեզվական, բնագրային, կառուցվածքային և այլն: Սրա կարևորությունը ավելի է շեշտվում, եթե նկատի առնենք, որ արդեն հաստատված է, որ թարգմանությունը ավելի հին վիճակ է ներ-



կայացնում, քան հայտնի հունարեն ձևազրբերը, ըստ «Գիրք հարցողացի» լավագույն մասնագետ Գրիգորյանի՝ այն ենթադրում է հունարեն մի հնագույն խմբագրություն, որից IX դարում օգտվել են Կոստանդնուպոլսի Ստուդիոն հույակավոր վանքում: Բարեբախտաբար, այդ նախնական քննությունը արդեն կատարված է բնագիրը պատրաստողի կողմից, և նա հնարավորություն ունի հետագայում առանձին ուսումնասիրությանը անդրադառնալու և այդ խնդրին:

Ուսումնասիրության լավագույն հատվածները, մեր կարծիքով, լեզվական վերլուծություններին նվիրված էջերն են, ուր հիմնավորվում են թարգմանության ժամանակի և լեզվի առընչությամբ հետազոտողի եզրահանգումները: Մխաված շենք լինի, եթև ասենք, որ այստեղ է, որ լավադույնս դրսևորվում են ուսումնասիրողի թե՛ փայլուն լեզվական խմացությունները և թե՛ ուղղակի կովաններ լզոյության պայմաններում կողմնակի վկայությունները արժևորելու և նպատակամեն ծառայեցնելու ունակությունը: Թարգմանության լեզուն դասական և հունարան թարգմանությունների միջև մի միջակա փուլ դիտելու Ուլուհոյանի վարկածը մեզ համոզիչ է թվում (այն խարսխված է լեզվական և տեքստարանական մանրազնին քննության վրա) և գտնում ենք, որ, եթև ապագայում նույն եղանակով համեմատական քննության ոլորտն առնվեն նաև Կեսարացու մյուս կարևոր գործերը՝ «Վեցօրեան» և «Գիրք պահոցը» ևս (վերջինիս գիտական բնագիրը պատրաստել է հրատարակության հանգուցյալ հայագետ-բյուզանդագետ Կ. Մուրադյանը), ապա թարգմանության ժամանակի և հանգամանքների մասին մեր պատկերացումները մեջ թերևս առավել որոշակիություն կմանի: Առաջմ, սակայն, այս երևք գործերի հայացման պարագաները մնում են ասուղբելի: Եվ վերջայես, մի վերջին կարևոր հարցի մասին, որն իր մի թևով կապվում է նաև թարգմանության ժամանակի խնդրի հետ:

Իր ժամանակի հոգևոր և հասարակական կյանքի խոշոր կազմակերպիչներից մեկի՝ Բարսեղ Կեսարացու երկը ողջ Քրիստոնյա Արևելքում հայտնի է եղել իրրև յուրատեսակ կանոնադրություն նոր վարդապետության հետևորդ անհատների և վանական եղբայրությունների համար: Այն համընդհանուր ընդունելություն գտավ և ի մոտո նպաստեց նաև Փոքր Հայքի եկեղեցիների գործունեության կանոնակարգմանը և, բնական է, քաջ հայտնի դարձավ Հայաստանի մտավորական լայն խավերին: Այս՝ սկզբունքային, բայց ընդհանուր և լրացուցիչ հիմնավորումների կարիք զգացող դրույթը գիտնականը հաստատում է նոր դիտարկումներով, Հաճախապատում ճառերի և Հայոց կանոնագրքի հետ «Գիրք հարցողացի» բնագրային հարագատությունը ապացուցող ծանրակշիռ փաստարկների երկու շափազանց ուշագրավ խմբերով, որ աներկբայելի են դարձնում միջնադարի հայոց վանքերում Բարսեղ Կեսարացու քարոզության և սահմանադրության կիրառությունն ու եկեղեցական-կրթական համակարգի մեջ դրանց ներառումը:

Ամփոփենք: Եթև ամեն մի դրքի, տվյալ դեպքում՝ գիտական հրատարակության երևանգալը յուրատեսակ ավարտ ու ամփոփում է հարցերի մի որոշ շրջանակի, ապա նաև մեկնակետ է, նոր ազդակ ու հրահրիչ մտքի, որ գիտության մեջ անվերջանալի է: Եվ որքան դիրքն արժեքավոր է, այնքան տևական է լինում նրա արձագանքը, որի մեջ լսելի են լինում նաև ցանկության ձայներ և դիտողություններ: Այս խորին գիտակցությամբ էլ իր երկարամյա տքնանքի երկհատոր արդյունքը մասնագետներին ներկայացնելուց առաջ Գարրիելյա Ուլուհոյանը դրում է վերջին, շափազանց կարևոր պարբերությունը. «Մի անտիպ բնագրի հրատարակումը և նրա բառացի թարգմանությունը նրանց համար, որ հայերեն լզիտեն, վերջնակետ չէ, այլ ընդհակառակը՝ մի սկիզբ է վիճարանության, բանավեճի և ճանաչողության մի գործի, որ դրված է ուսումնասիրողի սեղանին»:

Բաճախի. գիտ. դոկտոր ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ